

ՀՈԳՆԱԿԻ ԶՈՒԳԱԶԵՎԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Բ. Խ. ՄԾԺՈՒՆՑ

Հին հայերենում հոգնակի զուգաձևություններ են հանդիպում ինչպես մեկից ավելի առարկաներ արտահայտող թվային այլ ենթակարգերի, այնպես էլ բուն հոգնակի ենթակարգի տարբեր ձևերի միջև: Առաջինի համար առավել տարածված են հակադրության այն եզրերը, որոնք ընդգրկում են բուն հոգնակին և քերականական մասնիկներով ձևավորված հավաքականները, ինչպես՝ ազատք//ազատանի, աագք//աագանի, բանք//բաննար, երիցունք//երիցանի, մանկունք//մանկտի, խոզք//խոզեան, էշք//իշան ևն: Երկրորդ դեպքի համար առավել հատկանշական են հոգնակի ուղիղ և թեք հոլովներով արտահայտված զուգաձևերը: Այսպես, օրինակ՝ հոգնակի ուղղական և հայցական հոլովների հոգնակիակազմ հիմքերը մշտապես նույնն են, դրանց տարբերակումը տեղի է ունենում -է//ւ հակադրությամբ, ինչպես՝ սիրտք//սիրտս, գիրք//գիրս, ծովք//ծովս, անձինք//անձինս, ձկունք//ձկունս, ճանապարհք//ճանապարհս, թշնամիք//թշնամիս ևն: Որոշ դեպքերում հիշյալ հոլովների հետ զուգաձևություններ են կազմում նաև հոգնակի սեռական և տրական հոլովները, ինչպես՝ աստեղք//աստեղս//աստեղց, կայսերք//կայսերս//կայսերց, մանունք//մանունս//մանունց, մարք//մարս//մարց ևն:

Ինչ վերաբերում է հոգնակի ուղղականով արտահայտվող զուգաձևերին, ապա դրանք ամբողջապես կապվում են հոգնակիակազմ հիմքերի կառուցվածքային առանձնահատկությունների և հիմքերի մասնիկավորման տարբեր արտահայտությունների հետ, որոնց քննությանը ցանկանում ենք անդրադառնալ ստորև: Ընդ որում հին հայերենում գործածվող զուգաձևությունների իրական պատկերը ցույց տալու համար այստեղ ներկայացնելու ենք միայն հինգերորդ դարի պատմագրությունից քաղված հոգնակի ուղղականով արտահայտված օրինակները, որոնց հիման վրա էլ նպատակ ունենք հնարավորին շափ ամբողջացնելու բուն հոգնակիի համար առանձնացվող զուգաձևությունների կառուցվածքային և իմաստային դրսևորումները: Ամենից առաջ նշենք, որ հոգնակի զուգաձևերի առաջացման համար բնական է դառնում այն հանգամանքը, որ որոշ շարքի բառեր պետք է ունենան հոգնակի թվի կազմության ընդհանուր օրինաչափությունից շեղումներ կամ տարբեր օրինաչափությունների զուգահեռ գործածություն: Այս առումով փաստական նյութի դասդասումները ցույց են տալիս, որ հին հայերենի համար ընդունելի են երկու պայմաններն էլ, այսինքն՝ այստեղ զուգաձևություններ են ստեղծվում և՛ միևնույն հիմքի վրա տարբեր մասնիկների ղուգորդումով, և՛ միևնույն հոգնակիերտով հոգնակիակազմ տարբեր հիմքերի հակադրությամբ: Զեկակազմական այս տարբերակումներից ելնելով էլ՝ գրաբարի համար առանձնացնում ենք միահիմք և տարահիմք կառուցվածքով զուգաձևություններ:

Միահիմք կառուցվածքով զուգաձևերի շարքում հիմնականում ընդգրկվ-

վում են բաղաձայնահանգ որոշ բառեր, ինչպես՝ երագի/երագունք, երագա-
զանք/|երագագունք, եպիսկոպոսք/|ֆեպիսկոպոսունք, նուազք/|նուագունք,
սարկաւապք/|սարկաւագունք: Շարքը լրացնում են նաև հիմքակազմ և-ով
վերջացող առանձին բառեր, ինչպես՝ ականք/|ակունք/|աչք, դրունք/|դուրք,
սերմանք/|սերմունք/|սերմանիք: Հայագիտության մեջ որոշակիորեն նշվում
է, որ հիմքակազմ և-ով բառերի հոգնակիները ունեն իմաստային տարբե-
րություններ: Պետք է նկատի ունենալ, որ այդ առանձնահատկությունները
դրսևորվում են երկու տարբեր մակարդակներում՝ բառային և քերականա-
կան: Այսպես՝ ակն բառը եզակիում բազմիմաստ է, իսկ հոգնակի զուգա-
ձևերից յուրաքանչյուրը արտահայտում է մեկ հիմնական կամ երկրորդա-
կան իմաստ՝ աչք «տեսողական օրգան», ինչպես՝ և ի զօրութիւն նորա կեան
ամենեքեան, և Աշխ մամենեցուն ի նա յուսան (Ագ. 204), Եւ որոց իցեն
աչք մտաց և շեն կուրացեալ ի հաւատոցն ճշմարտութենէն (Բուզ. 134), որ-
պէս զի զանգործս մեր տեսանեն աչք քո, արդ առաջի քո հեղումք զխնդրու-
ծրս մեր (Եղ. 98—100), որ ետ ինձ ի զուակէ իմմէ նստել յաթոռ իմ, և աչք
իմ տեսանեն (Փրպ. 397), ականք «գոհարեղենի», ինչպես՝ և կամ ականք
պատուականք ի Հնդկային աշխարհէն, որ ի վայելչութիւն զարդու ի խոյր
պսակի զարդարիցեն զթագաւորս (Ագ. 12). ակունք «աղբյուրի, գետի»,
ինչպես՝ Բայց սակայն ինքն առեալ վիճակ բնակութեան ունէր զանապատն,
ուստի բոխեալ հոսեն ակունք Եփրատ գետոյն (Բուզ. 414):

Դրունք/|դուրք և սերմանք/|սերմունք հոգնակի զուգաձևերի առաջին
եզրերը ընդունվում են բուն հոգնակիի, իսկ երկրորդ եզրերը՝ համապատաս-
խանաբար երկակիի և հավաքականության իմաստներով: Իմաստային այդ
խմբավորումների համար պետք է նկատի ունենալ որոշ վերապահումներ:
Այսպես՝ դժվար չէ համոզվել, որ դուրք ձևի նախնական իմաստը, իրոք,
երկակիութունն էր, և այդ գաղափարի վերացմանը զուգընթաց սահմանա-
փակվել են նրա գործածության դեպքերը, իսկ դրունք ձևը իր վրա է վերց-
րել հոգնակիի և հավաքականության իմաստները, որոնք և պայմանավո-
րել են նրա հաճախակի գործածությունը: Սակայն նույնը չի կարելի ասել
սերմանք և սերմունք զուգաձևերի մասին: Ամենայն հավանականությամբ
նախնական շրջանում երկու ձևերն էլ արտահայտել են հոգնակիության ի-
մաստ, իսկ հավաքականության նշանակությամբ հանդես է եկել սերմանքի
ձևը, որը սկսել է հաճախակի հանդիպել գրաբարի շրջանում կամ դրանից
ավելի վաղ: Իներենք մի քանի օրինակներ՝ Վասն զի դրունս բացեալ ջուրցն ի
խոնարհ, զի վերնաջուրցն դրունք բացցին երկնից (Ագ. 230), գիտեա՛ զի
բացեալ են դրունք մարդասիրութեանն Քրիստոսի առ իւր արարածս (Ագ.
418), զի յանկարծ բացան դրունք վկայանոցին, որ եղև ժողով մեծ բազմու-
թեան վկայիցն (Բուզ. 160), Յանկարծակի դարձեալ երևեցաւ նմա, զի բա-
ցան դրունք վկայանոցին (Բուզ. 160), և սերմանք և տունկք արկեալք յեր-
կիր բուսանին (Եզն. 147), և յէգս մարդկան և յանասնոց անկեալ սերմանք
զան ի ծնունդս և յաճախումն (Եզն. 147), որով և բոյսք և սերմունք ատո-
քացեալք և հասեալք ի կատարելութիւն՝ մատուցանեն մարդկան զկեալն բա-
րի և զուրախանալն (Փրպ. 81), Ամենայն քաղցրաբուղիս սերմանքի երկրի՝
ձեզ լիցին ի կերակուր (Ագ. 148), և ոչ եթէ այնպիսիք իցեն սերմանքիսն ա-
մուլք և ժանգառք..., այլ յաստուածեղէն գրոց, ի հոգեպատում մատենից
(Ագ. 214), Զի ի կոպաշտութեանդ սերմանքի յանշէջ հուր պեհենին արկա-
նէ, ուստի չիք հնարք փրկութեան՝ զայս պտուղ բերէ (Ագ. 290):

Համեմատաբար դժվար է իմաստային որոշակի սահմանազատում կա-
տարել բաղաձայնահանգ բառերի հոգնակի զուգաձևերի համար՝ եպիսկո-
պոսք/|եպիսկոպոսունք, երագք/|երագունք, երագազանք/|երագագունք, ճը-

իագր//ճրագունք, ծաղիկք//ծաղկունք, սարկաւագր//սարկաւագունք: Այս դեպքում պետք է դիմել հնարավոր ենթադրութիւններին: Այն, որ այդ բառերը շին բնորոշում զուգորդվելու հատկութեամբ, ցույց է տալիս, որ զուգորդական հոգնակերտները բառերի հիմքին են կցվել իմաստային ինչ-ինչ երանգներ արտահայտելու նկատառումով: Ամենայն հավանականութեամբ հայերենի որևէ կտրվածքում –ուն, –ան վերջավորութիւնները հոգնակիի իմաստից անցում են կատարել դեպի հավաքականութիւն. այդպես և աստիճանաբար տարածվել են այն առարկաների վրա, որոնք ավելի հաճախ կարող են գործածվել ոչ թե հոգնակիի, այլ հավաքականութեան իմաստով: Այդպես ձևավորվել են երիցուն, եպիսկոպոսուն, կանքեղուն, կուսան, ճրագուն, մկանուն, պառաւուն, պատերազմուն, սարկաւագուն հավաքականները: Խերկս դրանով պետք է բացատրել, որ հինգերորդ դարի պատմագրութեան մեջ այդ շարքի որոշ բառերի ոչ եզակիի թվակարգը արտահայտվում է միայն –ուն, –ան վերջավորութիւններով, ինչպես՝ երէց-երիցուն, ճրագ-ճրագուն, պառաւ-պառաւուն, պատերազմ-պատերազմուն, սարկաւագ-սարկաւագուն: Այս ընթացքում էլ ձևավորվել են հոգնակերտ-հավաքականակերտ վերջավորութիւններով բառերի հակադրութեան եզրերը՝ բնականաբար առաջ բերելով նաև այլ զուգածներ՝ երագր//երագունք, երագազանք//երագազունք, խոնջանք//խոնջանունք, ծաղիկք//ծաղկունք, նուազ//նուազունք ևն: Հարկ է նշել, որ շնայած որոշ բառերի –հ հոգնակերտով հոգնակին չի ավանդվել, բայց քանի որ դրանք հանդես են բերում արտաքին թեքում (անօսր-ի, ից, երէց-ու, ոյ, կոյս-ի, ից, կանթեղ-ի, աց, պառաւ-ոյ, պատերազմ-ի, սարկաւագ-ի), բնականաբար պետք է հետևեն հոգնակիի կազմութեան ընդհանուր օրինաչափութեանը՝ ունենալով նաև՝ անօսր, երէց, կանթեղ, կոյս, պառաւ, պատերազմ, սարկաւագ հոգնակի ձևերը:

Այժմ բերենք համապատասխան օրինակներ.

–Ք հոգնակերտով ձևեր՝ և երևեսցին ձեզ առաջնորդք, քահանայապետ տեսուչք եպիսկոպոս և երիցունք եկեղեցական կարգի լուսաւորութեան սիրոյն Աստուծոյ (Ազ. 428), և սա դիպեցաւ ի մեծ սիւնհողոսին ի Նիկիա..., որ ժողովեցան երեք հարեր և ութևտասն եպիսկոպոս (Բուզ. 42), Յոր սակաւ և հարքն մեր սուրբք եպիսկոպոս սահմանեցին կանոնս (Յզն. 199), յայնմ ժամանակի սփռեցան եպիսկոպոսն յիւրաքանչիւր իշխանութիւնս (Յզ. 114), և այլ եպիսկոպոս, միանգամայն հարիւր և հիսուն հարք որք նզովեալ մերժեցին զՄակեղոն և ամենայն հոգեմարտս (Խոր. 360), ժողովեցան այնուհետև ըստ հրամանի տանուտէրացն Հայոց սուրբ եպիսկոպոս ըստ գաւառաց աշխարհին Հայոց (Փրպ. 91), թէպէտ ծաղիկ լինին, զի ի սկտեղս պատուական թագարին ելանիցեն (Ազ. 362), ծաղիկ գարնանայինք յիշատակեցին զպսակասէր ամուսինս նոցա (Յզ. 408), դիցուք և մեք զանձինս մեր մահուամբ ի վերայ անմահ զօրութեանն, զի մի նուազ քան զվրէժխնդիրսն գտանիցիմք (Յզ. 218), Եմք մեք սակաւ թուով, բազում հարիւր առաւել թէ ևս յուրով և կամ նուազ (Փրպ. 333):

–Ունի մասնիկով ձևեր՝ և որ ի ծովէն մօտի ելոյ որ ելանեն... անօսուն և այն որ ի ծովէն (Խոր. 428), Իսկ զայս ամենայն իբրև տեսին սուրբ եպիսկոպոսունքն, և քաջ զրդեալ յորդորեցան ի նոյն միաբանութիւն (Յզ. 128), և որ ընդ նովաւ եպիսկոպոսունք... տեսան մերոյ կոստանդեայ կայսեր ինքնակալի խնդալ (Խոր. 310), և երևեսցին ձեզ առաջնորդք... և երիցունք եկեղեցական կարգի լուսաւորութեան սիրոյն Աստուծոյ (Ազ. 428), Եի իբրև եմուտ Եւսերիոս արքեպիսկոպոսապետ և երիցունք ընդ նմա..., թռեաւ աղանին ի սեղանուոյն (Բուզ. 114), ամենայն եպիսկոպոսունք և երիցունք պատուէր հրամանի տուեալ աշխարհին (Յզ. 162), Եւ ժողովեցան Բի-

տուն և Բիկենդ երիցունք ի Հոռմ քաղաքէ (Խոր. 292), Ժողովեցան այնուհետև... պատուական երիցունք և վանականք (Փրպ. 91), և մի շիջցին նրագունք հաւատոց ուխտի սրբութեան մերոց (Ագ. 88), և լուսաւորքն իրրև նրագունք լուցեալք, վասն զխաւարն ի սիջոյ մեծի տանս փարատելոյ (Ծգն. 110), Զրուցեն զամանէ և պառատունք (Խոր. 232), Եւ երբէք երբէք պատեռագմունք շարժին, ուր մեղաւոր և արդար առ հասարակ կոտորին (Ծգն. 15), և պատեռագմունք դառնութեան, շարին մասին արարածք են (Ծղ. 50), իսկ այսօր եպիսկոպոսք և երիցունք և սարկաւագունք... կամին ընդ ձեզ յարձակել հարկանել զթշնամիսն մշտարտութեան (Ծղ. 228), և ամենայն կողմանցն այնոցիկ երիցունք և սարկաւագունք երկուցեալ դողային ի սրբոյն (Փրպ. 248)։

Միահիմք կառուցվածքով զուգածեալ լինենք մեջ առանձնանում է մարդ բառը, որի -բ հոգնակերտով հոգնակին շատ սահմանափակ կիրառութիւն ունի։ Դրան հակառակ՝ եզակի-հոգնակի հակադրութեան մեջ անհամեմատ հաճախակի է հանդիպում -իկ վերջավորութեամբ զուգորդված ձևը, որը, նախորդի համեմատութեամբ, հանդես է բերում որոշակի առանձնահատկութիւններ։ Նախ՝ այն -եաւ, -նեաւ ևն քերականական մասնիկներով ձևավորվող հավաքականների նման ունի եզակի թեքում (մարդիկ-մարդկան) և հայցական ու ներգոյական հոլովների եզականաձև կառուցվածք, այնուհետև՝ առանձին դեպքերում ստանում է նաև -բ հոգնակերտ՝ ծառայելով որպես հոգնակիակազմ հիմք (մարդիկբ)։ Ձևակազմական այդ դրսևորումներից ելնելով՝ կարելի է եզրակացնել, որ մարդիկ ձևը նախապես արտահայտել է հավաքականութեան իմաստ, իսկ հայերենի վաղ կտրվածքում, առավել ևս դասական գրաբարի շրջանում լայն գործածութիւն է ձեռք բերել՝ միաժամանակ հանդես գալով և՛ հավաքականութեան, և՛ հոգնակիութեան իմաստներով. այս ընթացքում էլ առաիճանաբար գործածութիւններից դուրս է մնում մարդբ հոգնակին¹։

Բառիս կիրառութեան իրական պատկերը ցույց տալու համար բերենք համապատասխան օրինակներ։

Հոգնակիի և հավաքականութեան իմաստով՝ Այլ զոր դուք կոչես մեծ Անահիտ տիկին, լեալ իցեն արդեօք մարդիկ ոք յանժամ երբեմն ժամանակի (Ագ. 42), Եւ այլ մարդիկն որք էին աղ...առ հասարակ թողին և փախեան (Բուգ. 76), քանզի դիւաց է կերպարանս ցուցանել, և մարդիկ ըստ կերպարանացն անուանս դնեն (Ծգն. 69), Գունդ կազմէր ի Հայոց Մեծաց զազատ և զազատորդի, և յարբունի տանէ զոստ... մարդիկ (Ծղ. 20), որպէս լրսեմք, մարդիկ աշխարհին ի հէն և զաղթելուն փախստեամբ ամբանան, իրրև ի ծայրս քարանձաւաց լեռանց ամբողջալք (Խոր. 64), Որպէս զի զհոգևորացն զբարի վարսն լուեալ բազմութեան ժողովրդոցն՝ նմանողք լինել ցանկանային մարդիկ ճգնութեանց նոցա (Փրպ. 13)։

Եզակեանաձև հայցական և ներգոյական՝ Քանզի դիցապաշտ կախարհութեամբ զմարդիկն որ յայնժամն էին, ցնորիս կեոպս ի կերպս լինելով դիւացրն՝ հաւանեցուցին մեհեանս շինել և պատեռ... կանգնել և երկիր պագանել (Ագ. 42), Նախ զայն տեսցուք, բնաւ դուցին այլ ինչ արարածք բանաւորք քան զհրեշտակս և զդևսս և զմարդիկ (Ծգն. 68), Արդ հրաման տուր՝ ի բաց քակել զտեղին զայն և ցրուեալ՝ զմարդիկն՝ զոր ժողովեցեր (Բուգ. 174), Մեծ է սէրն Աստուծոյ քան զամենայն մեծութիւն երկրուոր. և այնպէս աներկիւզս առնէ զմարդիկ՝ իրրև զանմարմին գօրս հրշտակաց (Ծղ. 198), Քանզի ան-

¹ Այդ են վկայում մարդբ հոգնակի ուղղակիան ձևը օրինակի դիմաց մարդիկ ձևի մեծ թվով գործածութեան դեպքերը։

բաւ մարդիկ սկսաւ զոհել դիւաց (Խոր. 110), որում յայն առնէր հրովարտակով զմարդիկն Հայոց զընդոստուցանել, այլ սիրով նուաճել (Փրպ. 156), և ոչ աշակերտացն իւրոց հալածել հրամայէր, որոց իւրն հրաման տուեալ էր մտանել ի մարդիկ (Նզն. 104), Արդ և ի մարդիկ երևի, և առաւել ի միոյ հօր որդիս (Նզ. 62):

Մասնակի կիրառութեան դեպքեր՝ Մարդի, որ ոչ ի կապանաց զանգիտեն և ոչ ի տանջանաց երկնչին... զմահ քան զկեանս ընտրեն (Նզ. 118), և ամենայն մարդիկ բերկրին Հայոց էին պտղաբերք և ողորմածք առ ի յիշել զաղքատս զտառապեալս և զօտարս (Բուզ. 350):

Հավաքականութիւնից հոգնակիին անցման իրական պատկերը ներկայացնում է աշխարհաբար գրական լեզուն, ուր մարդիկ ձևը հոգնակի է ոչ միայն իմաստով, այլև թեքման բնութիւնով՝ մարդիկ-մարդկանց: Մարդի/մարդիկ հարաբերակցութեան գործընթացը հնարափորութիւն է տալիս առավել հստակ պատկերացնելու նաև վերը նշված բառերի -ունք-ով ձևերի գործածութեան ընդհանրացումը քերականական տարբեր ենթակարգերի իմաստն արտահայտելու համար, բնականաբար նաև -ք հոգնակերտով ձևերի կիրառութեան խիստ սահմանափակումը կամ վերացումը:

Տարահիմք զուգաձևութիւնները բնորոշվում են մեկ հոգնակերտով, որը, սակայն, դրվում է տարբեր հոգնակիակազմ հիմքերի վրա: Առանձնացված զուգաձևութիւնների համար զուգահեռաբար հոգնակիակազմ հիմքեր են ծանայում եզակի ուղղական և սեռական հոլովաձևերը, ինչպես՝ աղբիւր-ք/աղբեր-ք, եղջիւր-ք/եղջեր-ք, մահ-ք/մահուան-ք: Նման դեպքում տարբեր հոգնակիների միջև իմաստային որևէ կարգի տարբերակում հնարավոր չէ առանձնացնել, քանի որ հին հայերենում թե՛ ուղղական և թե՛ սեռական հիմքերով կազմութիւնները սովորաբար գործածվում են հոգնակիի նշանակութեամբ: Ուստի զուգաձևերի առաջացման համար հիմք պետք է ընդունել այդ բառերի թեքման տարբեր դրսևորումները: Այսպես՝ մահ բառը թեքվում է երկու ձևով՝ մահ-մահու և մահ-մահուան, որտեղից առաջինը միանգամայն օրինաչափ ձևով հոգնակի կարող է կազմել ուղղական հիմքով այնպես, ինչպես արտաքին ու հոլովման ենթարկվող մյուս բառերը՝ գանձ-գանձու-գանձք, դար-դարու-դարք, ժամ-ժամու-ժամք, ծով-ծովու-ծովք ևն: Սեռական հիմքով հոգնակիի արտահայտութեամբ մահ բառը հետևում է անձն-անձին-անձինք, բռն-բռին-բռինք, դառն-գառին-գառինք ձևակազմութիւններին, իսկ հոգնակի հոլովման ժամանակ ընդունում է ծանունք-ծանունց, մանունք-մանունց, փոքունք-փոքունց բառերի թեքման բնութիւնը:

Թեև աղբեր/աղբիւր, եղջեր/եղջիւր բառերի թեքումը հիմնականում հետևում է ք>ե հերթագայութեամբ արտահայտվող գոյականների ընդհանուր կանոնին, սակայն մասամբ դասական գրաբարի շրջանում, իսկ ավելի հաճախ ուշ շրջանի գրաբարում հանդիպում են նաև արտաքին թեքման ձևեր: Թե՛ այս և թե՛ հոգնակի զուգաձևերի առաջացման հիմքում պետք է ընդունել եզակի ուղղականի տարբեր կառուցածակները, ընդ որում -եր վերջնավանկով ձևերում ւ-ը ունենք ավելի անկախ և բաց կամ ձայնավորական արտասանութիւն, որի պատճառով սեռական հոլովի ձևավորման ժամանակ երկբարբառի ւ-ն բաղադրիչը սղվել է՝ առաջ բերելով պարզ ձայնավորով հիմքեր՝ աղբեր/աղբեր, եղջեր-եղջեր: Իսկ իւր վերջնավանկում ւ-ը ի ձայնավորի հետ ունենք սերտ միասնութիւն, որի համար էլ սղման չի ենթարկվել, և այդ բառերը ընդունել են համապատասխան երկբարբառով (բիւր-բիւրոյ/բիւրու-բիւրք, թիւր-թիւրի/թիւրոյ-թիւրք, հիւր-հիւրոյ/հիւրի-հիւրք) միավանկ բառերի թեքման և հոգնակիի կազմութեան օրինաչափու-

թյունը, ինչպես՝ աղբիւր-աղբիւրոյ/աղբիւրի > աղբիւր, եղջիւր-եղջիւրոյ/եղջիւրի > եղջիւր: ժամանակի ընթացքում վերացել են թեքման երբեմնի հստակ տարբերակումները՝ պահպանելով միայն թեք հոլովների տարբերկարգի արտահայտութիւնները, ինչպես՝ աղբեր-աղբերբ/աղբերաւ, աղբերբբ/աղբերօք, եղջերբ/եղջիւրիւ, եղջերբբ/եղջերօք² ևն:

Այժմ բերենք համապատասխան օրինակներ.

Ուղղական հիմնով՝ իսկ իւրոց ճանաչացն ծագէ, և աղբիւրն իմաստութեան ի նոյն լուսոյ ականէն առ նոսին բղխեալ (Ագ. 308), Զի լիցին նոքա ի լուսաւորութիւն գիտութեան, և աղբիւր հոգևոր իմաստութեան Հայաստան աշխարհիս (Իուզ. 22), և առ ստորոտովք լիբանցն բազումք ականակիտս բղխեալ աղբիւր, որ ի գետոյ եկեալ հաւաքումն հեզաբար (Խոր. 48), ամենայն եղջիւր մեղաւորաց փշրեցան (Փրպ. 290), Տուր ինձ Տէր, առնուլ պըսակ ընդ այնոսիկ... որոց փառաւորեալ են մահի իրեանց առաջի քո (Ագ. 62), որ մեղաւոր և արդար առ հասարակ կոտորին, և մահի տարածամք և ախտք շարաշարք (Եզն. 55), և կեանք իրեանց ի մահ համարեալ էին, և մահի իրեանց անշուշտ կեանք (Եզ. 136), սովք անբաւք և հիւանդութիւնք և մահի բազմօրինակք (Խոր. 254), ըստ բոյ արժանի պատրաստեալ պահին դժաւ շարաշար հատուցմունք և մահի (Փրպ. 174):

Սեռական հիմնով՝ Եւ շուրջ զգերեզմանան լինէին կամաւոր մահունի (Խոր. 230), Որպէս թէ յորժամ ծնանիցին, անդէն և մահուանն իւրաքանչիւր ուրուք անվրէպ սահմանիցին (Եզն. 107), Եթէ աղբեր մշտաբուղխք... հանապազ բղխեն և ոչ պակասեն (Եզն. 7), և էին ի վայրսն... լբինք ինչ, որում ի բնակչացն Եղջեր կոչեն (Բուզ. 382—384):

Աշխարհաբար գրական տարբերակում խիստ սահմանափակվել է զուգաձևերի քանակը ինչպես մեկից ավելի առարկաներ արտահայտող թվային ենթակարգերի մեջ, այնպես էլ բուն հոգնակիի տարբեր ձևավորումների միջև: Այդ սահմանափակումները տեղի են ունեցել մի շարք պատճառներով: Նախ՝ աշխարհաբարում վերացել է հին հայերենին հատուկ տարբեր հիմքերով հոգնակի թվի կազմութեան եղանակը. այստեղ հոգնակերտ վերջավորութիւնները մշտապես կցվում են եզակի ուղղականի հիմքին՝ ունենալով անհնչյունափոխ և հնչյունափոխված տարբերակներ միայն: Երկրորդ՝ վերացել կամ եզականացվել են զուգորդական հոգնակերտներով ձևերը, որոնք հաճախ են հանդիպում գրաբարյան զուգաձևերի մի եզրում: Երրորդ՝ վանկաքանակութեամբ պայմանավորված հոգնակիի կազմութիւնը նոր գրական լեզվում առաջ է բերում բառերի երկու կարգի խմբավորումներ, որոնցից յուրաքանչյուրը ստանում է իր հատուկ հոգնակերտ մասնիկը՝ -եւ (միավանկ հիմքերի համար) և -նեւ (բազմավանկ հիմքերի համար), բնականաբար սահմանափակվում են -եւ և -նեւ վերջավորութիւնների հրենարավորութիւնները՝ հանդես գալու միևնույն բառի կազմում: Զորրորդ՝ աշխարհաբարում առկա լեզվական որոշ փաստեր ցույց են տալիս, որ զուգաձևութիւնների արտահայտման հիմքում պետք է ընկնեն հին և նոր հոգնակերտներով կազմութիւնները: Սակայն հին հոգնակերտների գործածութեան ոլորտների նվազման պատճառով այդ կարգի զուգաձևերի համար ունենք միայն առանձին օրինակներ: Այսպես՝ -է և -նեւ հոգնակերտները միևնույն արժեքով հանդիպում են -ցի (ացի, եցի) ձայններով կազմված բառերի կազմում, ինչպես՝ գլուղացի/գլուղացիներ, մեղրեցի/մեղրեցիներ, երևանցի/երևանցիներ, որոնց առաջին եզրը աստիճանաբար դուրս է մղվում գործածութիւնից: Հին և նոր հոգնակերտներով ձևերի հարաբերակ-

² Օրինակները քաղված են Հայկազյան բառարանից:

ցության համար կան նաև մասնակի արտահայտութիւններ, որտեղ գրաբարյան կազմութիւնները ավելի շուտ գործածվում են ոճական նշանակութեամբ, ինչպես՝ անձեր//անձինք, պարուններ//պարունայք, տիկիներ//տիկնայք:

Աշխարհաբարին հատուկ հոգնակերտ վերջավորութիւններով զուգաձևերը ևս մասնակի դրսևորումներ ունեն և արտահայտվում են գաղտնավանկ վերջնավանկով երկվանկ բառերի ու միավանկ վերջնաբաղադրիչ ունեցող բարդութիւնների հոգնակիի կազմութեան մեջ: Այսպես՝ հայտնի է, որ վերջնավանկում գաղտնավանկ ունեցող երկվանկ բառերը նոր գրական լեզվում հետևում են միավանկ բառերի հոգնակիի կազմութեան կանոնին և ստանում են վերջավորութիւն: Սակայն այդ օրինաչափութիւնը հաճախ խախտվում է, և ինչպես ճիշտ է նկատել Մ. Ասատրյանը, «հաջորդող գաղտնավանկ ունեցող բառերի գոնե մի մասը ազատ կերպով հոգնակի կարող է կազմել նաև ներ մասնիկով, ինչպես՝ անգղ-անգղներ, արկղ-արկղներ, գամփո-գամփոներ, ոսկր-ոսկրներ և այլն»³: Այսպիսով, նշված բառերի համար կունենանք հոգնակիի միահիմք զուգաձևեր՝ անգղեր//անգղներ, արկղեր//արկղներ, գամփոներ//գամփոներ, ոսկրեր//ոսկրներ: Հոգնակի զուգաձևութիւնների համար հիմք կարելի է ընդունել նաև ներքոհիշյալ կառուցաձևն ունեցող միշարք ածականների -եր-ով և -ներ-ով բաղադրված հոգնակին, ինչպես՝ բարձրեր//բարձրներ, մանրեր//մանրներ, ցածրեր//ցածրներ, փոքրեր//փոքրներ: Իրանք իմաստային ինչ-ինչ տարբերութիւններ են ցուցաբերում. մի դեպքում հոգնակի ձևերից մեկը արտահայտում է փոխանվանաբար գործածվող հատկանիշի հետ հարաբերակցված առարկան, իսկ մյուսը՝ այդ առարկային առնչվող այլ առարկա կամ անձ:

Հայագիտութեան մեջ մասնակի զուգաձևութիւններ են առանձնացվում նաև վերջնաբաղադրիչ միավանկ բառերով կազմված բարդութիւնների հոգնակիի համար: Այսպես՝ Հր. Աճառյանը նման կարգի զուգաձևերի գոյութիւնը հիմնականում պայմանավորում է աշխարհաբար երկու գրական լեզուների հոգնակի թվի կազմութեան առանձնահատուկ դրսևորումներով, շնայած առանձին օրինակներ է վկայակոչում արևելահայ գրական լեզվից: «Իսկ երբ բարդ բառի վերջին եզրը միավանկ է, սկսում են տատանումներ: Թե՛ արևելյան, թե՛ արևմտյան գրականի մեջ սրանց հոգնակին զանազան ձևով է լինում. օր. լրագիր, լրագրեր, լրագիրներ, լրագրներ»⁴: Նույն բնույթի զուգաձևերի փոքրաթիվ օրինակներ է մատնանշում նաև Հ. Պետրոսյանը. «... Բաղաձայնահանգեր նշանակում է բաղաձայնով արտահայտված հանգեր», իսկ բաղաձայնահանգներ՝ «բաղաձայնահանգ ունեցողներ», գաղտնավանկեր՝ «գաղտնավանկ ունեցողներ», գաղտնավանկներ՝ գրութեամբ շարտահայտվող (ը) ունեցող վանկեր», օրավարձեր՝ «օրվա վարձեր», իսկ օրավարձներ՝ «օրավարձով աշխատողներ» և այլն»⁵: Հեղինակը այդ շարքը լրացնում է նաև հայեցակետեր/հայեցակետներ, հակատազարդեր//հակատազարդներ զուգաձևերով: Միահիմք կառուցվածքով հոգնակի զուգաձևերի համար մասնակի փաստեր է վկայում Մ. Ասատրյանը՝ ներկայացնելով նաև յուրաքանչյուր եզրի իմաստային առանձնահատկութիւնները. «... Մարգարտահատ բառը եթե նշանակի մարգարիտ հատող, հոգնակի կկազմի ներ-ով՝ մարգարտա-

³ Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանութեան հարցեր, հ. Ա, Երևան, 1970, էջ 125:

⁴ Հր. Աճառյան, կիսկատար քերականութիւն հայոց լեզվի, հ. 3, Երևան, 1957, էջ 318-819:

⁵ Հ. Պետրոսյան, Գոյականի թվի կարգը հայերենում, Երևան, 1972, էջ 310:

հատներ, իսկ եթե նշանակի մարգարտի հատ, հոգնակի կկազմի եր-ով՝ մար-
գարտահատեր»⁸:

Անշուշտ, նշված օրինակներով չեն սահմանափակվում բաղադրյալ կա-
ռուցվածք ունեցող հիմքերով արտահայտված հոգնակի զուգաձևությունների
հնարավորությունները աշխարհաբար գրական լեզվում: Այդ շարքը կարելի է
լրացնել նորանոր ձևերով, որոնք դարձյալ կունենան առարկայի և գործողի
իմաստային տարբերակումներ: Որպես օրինակ կարող ենք նշել՝ անասնակե-
րեր «անասունի կերեր», անասնակերներ «անասուն ուտողներ» (հմմտ. մար-
դակերներ, գիշակերներ բառերի հետ), մատենագրեր «մատյաններ», մատե-
նագիրներ «մատյան գրողներ», սրտացավեր «սրտի ցավեր», սրտացավներ
«ուրիշի համար ցավողներ», վայրահաչեր «հաչոցներ», վայրահաչներ «վայ-
րենի հաչողներ» ևն:

Կրաբար-աշխարհաբար հարաբերակցության մեջ հոգնակի զուգաձևու-
թյունների իրական պատկերը ամբողջական չի կարող լինել, եթե մեկ-եր-
կու խոսքով շանրագառնանք հայերենի բարբառներում գործող մի քանի օրի-
նաչափությունների: Նախ նշենք, որ բարբառներում դեռևս նկատելի են հին
հայերենի -է հոգնակերտի և նրանով կազմված զուգորդումների գործածու-
թյան դեպքեր: Թեև նոր հոգնակերտները (-եր, -իւր, -ար, -ներ, -նիւր, -նի,
-նէ) ընդհանրացման միտում են ձեռք բերում, սակայն չեն կարողացել լիո-
վին դուրս վանել գրաբարատիպ հոգնակերտներին, ընդհակառակը, վերջին-
ներին համար առանձնացվում են որոշակի դիրքեր, որտեղ գործածվում են
կամ միայն հին հոգնակերտները, կամ դրանք հոգնակիի հիմնական կազ-
միչներն են, ավելի գործուն, քան աշխարհաբարին հատուկ հոգնակերտներով
արտահայտված հակադրության եզրը: Այդպես է, օրինակ, -ցի (-ացի,
-եցի) ածանցով և ընդհանրապես ձայնավորով վերջացող բառերի վիճակը
հայերենի բարբառների մեծագույն մասում: Բնականաբար այս դիրքերում
հաճախակի են հանդիպում հին և նոր հոգնակերտները, դառնում բազմաթիվ
զուգաձևությունների և բազմաձևությունների պատճառ: Նշենք, սակայն, որ
եթե -է հոգնակերտը բարբառներում պահպանել է իր թվային հիմնական
արժեքը, ապա -է-ով բաղադրված զուգորդումներն ավելի հաճախ հանդես են
գալիս հավաքականության նշանակությամբ, ուստի ստորև մասամբ ենք
անդրադառնալու նոր հոգնակերտներով հոգնակի ձևերի և -է-ով արտա-
հայտված զուգորդումների հակադրությանը: Մի կողմ թողնելով զուգաձևու-
թյունների մասնակի դրսևորումները՝ անհրաժեշտ ենք համարում այստեղ
ներկայացնել այն հիմնական կաղապարները, որոնք հիման վրա ստեղծ-
վում են զուգաձևությունները կամ հայերենի բարբառներում ընդհանրապես,
կամ բարբառների որոշակի խմբավորումներում:

Հայերենի բարբառներին նվիրված համարյա ամեն ուսումնասիրու-
թյան մեջ հոգնակի թվի կազմության պատկերը ներկայացնելիս առանձնաց-
վում են բառերի երկու հիմնական խմբեր՝ ձայնավորահանգ և բաղաձայնա-
հանգ բառեր: Առաջին խմբի բառերի համար բնորոշ է -է հոգնակերտով
հոգնակիի արտահայտությունը, իսկ երկրորդի համար՝ -եր (-իւր, -ար) կամ
-ներ (-նիւր, -նի, -նէ) վերջավորություններով հոգնակիի կազմությունը՝
պայմանավորված վանկաքանակությամբ: Սակայն ձայնավորահանգ բա-
ռերի համար սովորական պետք է համարել նաև նոր հոգնակերտներով հոգ-
նակի ձևերը, որով և առաջ է գալիս հոգնակի զուգաձևությունների հիմնա-
կան շարքը բարբառներում: Ընդ որում ա և ու ձայնավորներով վերջացող
բառերի հոգնակիակազմ հիմքերում նկատվում են հնչյունափոխական որո-

⁸ Մ. Ասատրյան, նշվ. աշխ., էջ 128:

շակի տարբերակումներ, այսինքն՝ մի դեպքում հոգնակիակազմ հիմքում տեղի է ունենում ա>է (տղա>տղէք, փեսա>փեսէք), աւ>վ (կատու>կատվէք, առու>առվէք) փոփոխություն, իսկ մյուս դեպքում հոգնակիակազմ հիմքը համապատասխանում է եզակի ուղղականին: Այս վերջին երևույթը ավելի բնորոշ է Համշենի բարբառին, ինչպես՝ ակոայ>ագոա-ագոաւ, սատանայ>սաղոնա-սաղոնաւ, տղայ>ղղա-ղղաւ, փեսայ>փէսա-փէսաւ, առու>առու-առոււ, թթու>թրտու-թրտոււ, լեզու>լիզու-լիզոււ, կատու>գաղու-գաղոււ: Սակայն հենց այս բարբառում նոր հոգնակերաններից առաջ տեղի է ունենում հիմքի ձայնավոր փոփոխություն, որի պատճառով առաջ են գալիս հոգնակիի զուգաձևեր՝ հիմքային տարբերակներով, ինչպես՝ ագոաւ //ագոընի, սաղոնաւ//սաղոընի, առոււ//առվընի, թտոււ//թրտվընի ևն⁷:

Հայերենի բարբառների համար ընդհանրական պետք է համարել նաև այնպիսի զուգաձևությունների գոյությունը, որն առաջ է գալիս սովորական հոգնակիի և ստացական հոգնակիի հակադրության եզրերի միջև, ընդ որում երևույթը բնորոշ է միավանկ բառերին: Հակադրության մի եզրում բառի սովորական հոգնակին է, իսկ մյուս եզրում առկա է կրկնակի հոգնակերտով ձևը, որոնցից առաջինը արտահայտում է առարկայի, իսկ երկրորդը՝ ստացականության հոգնակին: Չնայած այս երևույթը հատուկ է նաև աշխարհաբար գրական լեզվին, սակայն առավել լայն գործածություն ունի արևելահայ բարբառներում: Այսպես, Արցախ-Սյունիքի խոսվածքներում շատ սովորական են՝ տրնէրս քանդվէցին «իմ տները», տրնէրնէս/Նիս քանդվէցին «մեր տները», ծէրնէրս ցափում էն «իմ ձեռքերը», ծրոբրնէս ցափում էն «մեր ձեռքերը»: Այս առումով յուրահատուկ դրսևորում է հանդես բերում Տիգրանակերտի բարբառը, ուր ստացական հոգնակիության համար գործածվում են տարբեր վերջավորություններ թե՛ միավանկ և բազմավանկ հիմքերի հակադրության մեջ և թե՛ մարմնի զույգ մասերը արտահայտող բառերի համար: Երևույթի մասին Ա. Հանեյանը նշում է. «Նի(-ս, -թ, -ն), վընի (-ս, -թ, -ն) վերջավորությունները կազմում են ստացական հատկացալի հոգնակին, ըստ որում նի ստանում են բազմավանկ բառերը՝ բրսսագնիս, խրմաձնիթ, փօլօցնիս, վընի՝ հիմնականում զույգանդամ օրգանների անունները՝ աշվընիս, մաղվընին, փէրվընիս, էրնի՝ միավանկ բառերը՝ ցէրնէրնիս, ֆէֆէրնիս»⁸:

Հոգնակի զուգաձևությունների մի առանձին շարք բնորոշ է Արցախ-Սյունիքի խոսվածքներին, որը արտահայտվում է հոգնակիակազմ հիմք-հոգնակերտ յուրահատուկ կաղապարային դրսևորումով: Թեև աշխարհաբարի գրական և խոսակցական տարբերակների նման այստեղ ևս հիմնականում կանոնավորված է միավանկ և բազմավանկ հիմքերով հոգնակիի կազմության օրինաչափությունը, սակայն երեք և ավելի վանկ ունեցող բառերը հաճախ շեղվում են ընդհանուր կանոնից և զուգահեռաբար զուգորդվում էր և -նէ/նի հոգնակերտներով: Հոգնակիի կազմության այս յուրահատկությունը սկզբնավորվել է միջին հայերենի ժամանակաշրջանից, որը շարունակվում է գործել հիշյալ խոսվածքներում: Միջին հայերենում գործող այդ երևույթի մասին ահա թե ինչ է գրում Հ. Պետրոսյանը. «Հոգնակիակազմության այս նոր տիպոլոգիայի համաձայն՝ վանկաքանակությունից է կախված, թե հիմքը ինչպիսի հոգնակերտի հետ պետք է զուգորդվի. ըստ այդմ առանձնանում են միավանկ, երկվանկ, բազմավանկ հիմքատեսակներ: Սակայն միավանկների և բազմավանկների հակադրությունը, մի կողմից, և

⁷ Օրինակները քաղված են Հր. Աճառյանի «Թեանություն Համշենի բարբառի» գրքից:

⁸ Ա. Հանեյան, Տիգրանակերտի բարբառը, Երևան, 1978, էջ 65:

երկվանկների ու բաղմավանկների հակադրությունը, մյուս կողմից, խիստ ընդգծված չէր. միավանկ հիմքերը համակարգայնորեն զուգորդվում են եր, երկվանկները՝ նի հոգնակերտի հետ, իսկ բաղմավանկ հիմքերը՝ եր, նի, ներ»⁹: Միանգամայն հարազատ մնալով հոգնակիակալում հիմքերի տարբերակման միջինհայերենյան այդ օրինաչափությունը՝ Աղոցախ-Սյունիքի խոսվածքները դրսևորում են նաև մի այլ առանձնահատկություն: Չնայած բաղաձայնահանգ երկվանկ հիմքերը սովորաբար զուգորդվում են -նէ//նի վերջավորություններով, սակայն դրանք միաժամանակ կարող են բաղադրվել -ֆ հոգնակերտի հետ՝ ունենալով -նէ//նէֆ, -նի//նիֆ պարզ և զուգորդված հոգնակերտներով զուգաձևությունների հակադրության եզրեր, ինչպես՝ աման > աման-ըմըննէ//ըմըննէֆ, դանակ > տափակ-տիներկնէ//տիներկնէֆ, նամակ > նամակ-նըմըկնէ//նըմըկնէֆ, տախտակ > տախտակ-տրխտրկնի//տրխտրկնիֆ, քաղաք > ֆաղաֆ-ֆրդրֆնի//ֆրդրֆնիֆ ևն: Մինչդեռ երեք և ավելի վանկ ունեցող բառերի համար ավելի բնորոշ է -եր և -նէ(նի) վերջավորություններով ձևավորված հոգնակիների հակադրությունը, չնայած մասնակի դեպքերում կարող է հանդես գալ նաև -նէֆ-ով բաղադրված հակադրության երրորդ եզրը: Ավելացնենք նաև, որ երկանգամ հակադրությունը ընդգրկում է և՛ պարզ, և՛ բաղադրյալ հոգնակիակազմ հիմքերով արտահայտված հոգնակիները, ինչպես՝ արտասուք > րտասունֆ-րտրսունֆէր/րտրսունֆնէ, գերեզման > կիրէզման-կիրիզմանէր/կիրըզմըննէ, թագաւոր > թաֆավէր-թաֆավէրէր/թաֆավէրնէ, կարկատան > կրկատան-կրկրտանէր/կրկրտըննէ, հրերեշտակ > նիլիշտակ-նիլիշտակէր//նիլիշտակնէ, ձիաւոր > ծիյավէր-ծիյըվէրէր/ծիյավէրնէ ևն:

Ինչպես նկատելի է, վերը նշված հոգնակիի զուգաձևերը հիմնականում ներկայացնում են միահիմք կառուցվածք, սակայն հայերենի բարբառներում գործում է նաև հոգնակիակազմ հիմքերի ձևավորման մի այլ օրինաչափություն, որը հատուկ է այս կամ այն իմբի բարբառներին: Այսպես՝ Ագուլիսի բարբառում հոգնակիի զուգաձևությունները ներկայացնում են տարբեր հիմքերով, ընդ որում հակադրության մի եզրում բարբառին հատուկ հնչյունափոխված հիմքն է, իսկ մյուս եզրում՝ նախահիմք հնչյունի վերականգնված հիմքային տարբերակը՝ բարբառային որոշակի արտահայտությամբ: Քերենք շր. Աճառյանի կողմից վկայված օրինակները. «Կան բառեր, որ ունեն թե՛ ա-ով և թե՛ օ-ով ձևերը. ինչ. աս «վախ» > օհ, օհար, ահար, կաթ «կաթիլ» > կօք, կօքար, կաքար, կախ > կօհ, կօհար, կահար, կապ > կօպ, կօպար, կապար, շար «շարք» > շօր, շօքար, շարքար, կարճ > կօռն, կօռնար, կարճար»¹⁰,

Նախահիմք ձայնավորի վերականգնված հիմքային տարբերակներ են հանդիպում նաև Ղարաբաղի, Հաղբութի, Սասունի ևն բարբառներում: Այստեղ արդեն հնչյունական տեղաշարժերով միմյանց հակադրվում են եզակի ուղղականը և հոգնակիակազմ հիմքը: Ինչպես ճիշտ նկատել է Վ. Պետոյանը, բոլոր դեպքերում օրինաչափությունը տարածվում է միավանկ հիմքերի վրա. «Երբ միավանկ բառը բարբառում եզակիում հնչյունափոխվել է, հոգնակի դառնալու ժամանակ նախ ընդունում է նախնական ձևը, ապա նոր ստանում հոգնակի մասնիկ, ինչպես՝ դեղ > տիղ > տէղիր, գեղ > կիղ > կէղիր, ցեխ > ցիխ > ցէխիր, կեռ > գիռ > գէռիր, բեռ > պիռ > պէռիր կամ պէռնիր»¹¹:

Ամփոփելով հոգնակի զուգաձևությունների վերաբերյալ վերը տրված

⁹ Չ. Պետոյան, նշվ. աշխ., էջ 160:
¹⁰ Չր. Աճառյան, Քննություն Ագուլիսի բարբառի, Երևան, 1934, էջ 170—171:
¹¹ Վ. Պետոյան, Սասունի բարբառը, Երևան, 1954, էջ 21:

բուր կարգի դիտողութուններն ու դիտարկումները՝ գրաբար-աշխարհաբար հարաբերակցության համար նկատելի են դառնում մի շարք առանձնահատկութուններ: Նախ՝ հոգնակի թիվ կազմող միջոցների փոփոխման և զուգորդման նոր կանոնների հաստատմանը զուգընթաց տարբեր բնույթ են ըստացել նաև զուգաձևերի հակադրության եզրերը: Այսպես՝ հին հայերենի տարբեր հիմքերով կազմութունների փոխարեն գրական նոր լեզվի մեջ հիմնավորվել է ուղղական հիմքով հոգնակիի արտահայտության օրինաչափութունը, որը և հոգնակի զուգաձևերի կառուցվածքային և քանակական նվազման պատճառ է դարձել: Երկրորդ՝ գրաբարում -ի հոգնակերտը ընդհանրական էր, ուներ գործածության լայն ընդգրկում, որի շնորհիվ այն կարող էր հանդիպել նաև այնպիսի դիրքերում, ուր սովորաբար հանդես են գալիս զուգորդական հոգնակերտները: Իսկ նոր լեզվի մեջ -եք և -նեք հոգնակերտներից և ոչ մեկը ձեռք չի բերել ընդհանրական կիրառություն, որի պատճառով դրանք կարող են միևնույն դիրքում հանդիպել միայն ինչ-ինչ պայմաններում: Երրորդ՝ հին և նոր գրական լեզուներում այլ քերականական կարգերի նման հոգնակիի կազմութունը ևս կանոնավորված է, գործում է սվյալ տարբերակի հատուկ որոշակի օրինաչափութունների համապատասխան, բնականաբար այստեղ սահմանափակվում են զուգաձևութունների առաջացման լայն հնարավորութունները: Դրան հակառակ՝ հայերենի բարբառները զգալիորեն ազատ են թե՛ հին պարզ ու զուգորդական հոգնակերտները և թե՛ նոր լեզվի հոգնակիակազմության կանոններն ու հոգնակերտ վերջավորութունները օգտագործելու մեջ: Եթե այս ամենին ավելացնենք նաև տարբեր խոսվածքներում կամ բարբառախմբերում գործող հոգնակիի կազմության յուրահատուկ կանոններն ու նորանոր մասնիկները, հոգնակիակազմ հիմքերում կատարված հնչյունական տարարնույթ փոփոխութունները, ապա պարզ է դառնում բարբառներում ստեղծված մեծ քանակով հոգնակի զուգաձևութունների և բազմաձևութունների իրական պատկերը:

В. Х. МЕЖУНЦ—Параллельные формы множественного числа в армянском языке.—Фактические примеры древнего и нового армянского, а также современных диалектов показывают, что в соотношении грабар-ашхарабар значительно изменились средства и структура образования параллельных форм множественного. Так, в древнеармянском основу параллельных форм составляли *ք*, *-ունք*, *անք* и т. д., которые в литературном ашхарабаре встречаются лишь в отдельных случаях. В новом языке окончания множ. ч. *եր* и *ներ* имеют определенные сферы употребления, поэтому они лишь изредка встречаются в одной и той же позиции. В армянских диалектах чаще встречаются параллельные формы, которые в основном обусловлены неограниченным функционированием старых и новых окончаний множественности.